


Պատասխանների թերթիկների լրացման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման ժամանակ օգտագործվող **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ** նախատեսված են 6 առարկաների (մաթեմատիկա, ֆիզիկա, աստղագիտություն, կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն) առաջադրանքների պատասխանները լրացնելու համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սովորել այն ճիշտ լրացնելը: Ծանոթանանք **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ** լրացման **ՈՒՂԵՑՈՒՅՑԻՆ**:



Ընդհանուր ցուցումներ

1. **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ** պետք է լրացնել բացառապես **ՄԵՎ** կամ **ԿԱՊՈՒՅՑ** գույնի գրիչներով: Չի թույլատրվում այն լրացնել գունավոր (կարմիր, կանաչ, դեղին և այլն) կամ գելային գրիչներով:

2. **Անձնական տվյալները** (ազգանուն, անուն, հայրանուն, մարզ և դպրոց) լրացնել ընթեռնելի ձեռագրով /տես նկարում/:



3. **Անձնական համարի** և **կարճ պատասխանով** առաջադրանքների դատարկ վանդակներում թվերը նույնպես լրացնել ընթեռնելի ձեռագրով /տես նկարներում/:




4. Համապատասխան քառակուսին նշել բացառապես -ի տեսքով:

Անձնական համարի լրացման ցուցումներ

1. Ձեր անձնական համարը կհայտնի պատասխանատուն օլիմպիադայի անցկացման օրը կամ այն կարող եք գտնել առարկայական օլիմպիադաների համար նախատեսված կայքերում (<https://olymp.am/> կամ <https://lib.armedu.am/>):

2. Լրացրեք Ձեր անձնական համարը (**վեցանիշ թիվ**), յուրաքանչյուր դատարկ վանդակում գրելով միայն մեկ թվանշան, այնուհետև սյան մեջ թվանշանին համապատասխան քառակուսին նշեք -ով: Օրինակ, **480219** անձնական համարը /տես նկարում/:




3. Համապատասխան քառակուսին չնշելու դեպքում համարը չի վերծանվի և կհամարվի անվավեր:

Դասարանի և առարկայի լրացման ցուցումներ

1. **Դասարան** դաշտում -ով նշել քառակուսին, որը պարունակում է Ձեր դասարանի թիվը: Օրինակ, **10**-րդ դասարան /տես նկարը/:




2. **Առարկա** դաշտում -ով նշել Ձեր առարկային համապատասխան քառակուսին, որը նշված է առարկայի ձախ մասում: Օրինակ, **Կենսաբանություն** առարկան /տես նկարը/:



Ընտրովի պատասխանով առաջադրանքների լրացման ցուցումներ

Առաջադրանքի համարին (դրանք 15-ն են՝ 1-ից 15-րդ) համապատասխան սյունակում -ով նշել այն քառակուսին, որը պարունակում է ընտրված տարբերակը /ճիշտ պատասխանը/: Յուրաքանչյուր սյունակում պետք է նշել **ՄԵԿ** քառակուսի /առաջադրանքն ունի միայն մեկ ճիշտ պատասխան/:


Օրինակ, եթե 6-րդ առաջադրանքում ճիշտ պատասխանը 1-ինն է, 7-րդ առաջադրանքում՝ 4-րդը, 8-րդ առաջադրանքում՝ 2-րդը և 7-րդ առաջադրանքում՝ 4-րդը, ապա նրանք կնշվեն նկարում բերված տեսքով:



Կարճ պատասխանով առաջադրանքների լրացման ցուցումներ


Յուրաքանչյուր առաջադրանքի համարին (դրանք 5-ն են՝ 16-ից 20-րդ) համապատասխան դատարկ վանդակներում լրացնել Ձեր ստացած թվային պատասխանը (այն կարող է ընդունել 0-ից 999 արժեքներից որևէ մեկը), և այս մեջ թվանշանին համապատասխան քառակուսին նշել -ով: Յուրաքանչյուր պունակում պետք է նշել **ՄԵԿ** քառակուսի:

Օրինակ, եթե 18-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը **944** է, 19-րդ առաջադրանքինը՝ **60**, իսկ 20-րդ առաջադրանքինը՝ **8**, այդ դեպքում վանդակները պետք է լրացնել նկարում բերված տեսքով:



Ուշադրություն:

- Եռանիշ պատասխանի դեպքում լրացնել առաջադրանքի բոլոր դատարկ վանդակները և համապատասխան այս մեջ նշել թվանշանին համապատասխան քառակուսին:
- Միանիշ կամ երկնիշ պատասխանի դեպքում լրացնել առաջադրանքի դատարկ վանդակները (հերթականությունը էական չէ, կարելի է լրացնել նաև առաջին վանդակից) և համապատասխան այս մեջ նշել թվանշանին համապատասխան քառակուսին: Այս դեպքերում թվի սկզբից 0 (զերո) գրելու անհրաժեշտություն չկա:
- Սյունակում համապատասխան քառակուսին -ով չնշելու դեպքում պատասխանը հաշվի չի առնվում՝ անկախ դատարկ վանդակներում լրացված թվանշանների ճիշտ կամ սխալ լինելուց: Հիշեք, համակարգիչը ստուգում է բացառապես -ով նշված քառակուսիները, ձեռագիր գրված տեքստերի ստուգում չի կատարում:
- Քառակուսիները լրացնելիս **չի թույլատրվում** տարբեր նշումներ կատարել: Մասնավորապես, նկարում բերված ձևերով՝



և այլն:

- **Ջնջումներ** կատարել **չի թույլատրվում**:

Ուղեցույցը կազմեց Դավիթ Մինասյանը: